Կարգապահական գործ թիվ ԿԳ-14116

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի ապրիլի 30-ի թիվ 94-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/67-Ա

ԼՂՀ ՓԱՍՏԱԲԱՆ ԳԱՐԵԳԻՆ ԲԱԲԱՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի **(այսուհետ՝ նաև Պալատ)** խորհուրդը **(այսուհետ՝ նաև Խորհուրդ)**, նախագահությամբ Պալատի խորհրդի անդամ Լիպարիտ Սիմոնյանի, մասնակցությամբ՝ Պալատի խորհրդի անդամներ Սիմոն Բաբայանի, Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Մարտուն Փանոսյանի և Տիգրան Խուրշուդյանի,

Քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

30.04.2015թ-ին քննության առնելով ԼՂՀ փաստաբան Գարեգին Բաբայանի (ԼՂՀ փաստաբանական գործունեության թիվ 27 արտոնագիր, ՀՀ տարածքում փաստաբանի գործունեության թիվ 26 հավատարմագիր) (այսուհետ՝ նաև Պատասխանող), կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. <u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքերը.</u>

Սույն Կարգապահական վարույթը հարուցելու համար հիմք է հանդիսացել ՀՀ փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) փաստաբան Ռոբերտ Բեջանյանի (այսուհետ՝ Դիմող) 26.08.2014թ-ի դիմումը՝ ԼՂՀ փաստաբան Գարեգին Բաբայանին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին Պալատի նախագահի որոշումը.</u>

2014թ. սեպտեմբերի 12-ին Պալատի նախագահի կողմից կայացվել է <<ԼՂՀ Փաստաբան Գարեգին Բաբայանի (արտոնագիր թիվ 27, ՀՀ տարածքում փաստաբանի գործունեության թիվ 26 հավատարմագիր) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու մասին>> թիվ 323-Ա/ԿԳ-14116 որոշումը, որի համաձայն որոշվել է.

1. Պալատի կողմից հավատարմագրված ԼՂՀ փաստաբան Գարեգին

Բաբայանի (արտոնագիր թիվ 27, ՀՀ տարածքում փաստաբանի գործունեության հավատարմագիր թիվ 26) նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ Կանոնագրքի 3.1.9 կետով սահմանված պահանջի խախտման հատկանիշներով (կարգապահական գործ թիվ ԿԳ-14116):

2. Նշված կարգապահական վարույթով դիմող ճանաչել Պալատի փաստաբան Ռոբերտ Բեջանյանին:
3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավար Մանե Կարապետյանին՝

- Կարգապահական գործը հինգ օրվա ընթացքում հանձնել հերթական կարգապահական գործ նախապատրաստողին.
- Սույն որոշման մեկական օրինակ ուղարկել Դիմողին , և փաստաբան Գարեգին Բաբայանին պարզաբանելով նրանց <<Փաստաբանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 39.2 հոդվածով նախատեսված իրավունքները:

3. <u>Դիմողի և Պատասխանողի բացատրությունները.</u>

<u>Դիմողի բացատրությունները</u>

Փաստաբան Ռոբերտ Բեջանյանը 30.06.2014թ. ՀՀ Փաստաբանների պալատի նախագահին է հասցեագրել թիվ 2 գրությունը հետևյալ բովանդակությամբ

<<Հայտնում եմ Ձեզ, որ հանդիսանում եմ ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվող թիվ ՍԴ3/0156/01/13 քրեական գործով ամբաստանյալ Զավեն Վալերիկի Բադիրյանի շահերի պաշտպանը:

Սույն գործով կատարված նախաքննության ընթացքում 14.10.2013թ. իմ պաշտպանյալ Զավեն Վալերիկի Բադիրյանի նկատմամբ ՀՀ ՊՆ ՔԾ 9-րդ կայազորային քննչական բաժնի քննիչ Ն.Խաչատրյանի կողմից որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրություն չհեռանալու մասին, որի հիման վրա նա ստացել է կասկածյալի կարգավիճակ:

<u>Նույն օրը նույն քննիչի կողմից</u> արձանագրություն է կազմվել կասկածյալ Զավեն Վալերիկի Բադիրյանին պաշտպանության և պաշտպան ունենալու իրավունքը բացատրելու մասին: Իմ պաշտպանյալի պնդմամբ ինքը քննիչի պահանջով և թելադրանքով այդ արձանագրության մեջ գրել է, որ չի ցանկանում պաշտպան ունենալ: Այդ արձանագրությունը ստորագրել է նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության փաստաբանների պալատի անդամ Գարեգին Աշոտի Բաբայանը (ԳԹ 71): Մինչ այդ արձանագրությունը գործի նյութերում առկա է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից Գարեգին Աշոտի Բաբայանին 15.03.2007թ. տրված փաստաբանական գործունեության թիվ 27 արտոնագրի և վկայականի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից 08.12.2012թ. տրված օտարերկրացի փաստաբանի փաստաբանական գործունեության թիվ 26 հավատարմագրի և վկայականի լուսապատճենները (ԳԹ 69,70):

Հարկ եմ համարում նշել, որ իմ պաշտպանյալը պնդում է նաև, որ ինքը

քննիչի մոտ ընդհանրապես **չի տեսել** փաստաբան Գարեգին Աշոտի Բաբայանին, առավել ևս ինչպես այդ, այնպես էլ հետագ այլ արձանագրությունը կազմելիս: Նա հայտնել է նաև, որ իրեն համար պարզ չէ, թե փաստաբան Գարեգին Աշոտի Բաբայան ինչ հանգամանքներում է ստորագրել այդ արձանագրությունները:

Պաշտպանից հրաժարվելու արձանագրությունն օրենքի խախտմամբ կազմելուց հետո քննիչն իմ պաշտպանյալին որպես կասկածյալ հարցաքննել է նույն օրը ժամը 16.30-ից 18.40-ը, խախտելով նրա պաշտպանական իրավունքը, որին իր գործողություններով փաստորեն նպաստել է փաստաբան Գարեգին Աշոտի Բաբայանը առանց այդ արձանագրության կազմելուն մասնակցելու դրա տակ ստորագրելով:

Իմ պաշտպանյալի հարցաքննությունից մոտ 2 ժամ հետո **նույն քրեական գործով նույն քննիչի կողմից** նոր արձանագրություն է կազմվել կասկածյալ Գևորգ Սոկրատի Գյագունցին պաշտպանության և պաշտպան ունենալու իրավունքը բացատրելու մասին, որին **նույնպես մասնակցել է նույն փաստաբան Գարեգին Աշոտի Բաբայան** (ԳԹ 83), որով նույնպես խախտվել է կասկածյալ Գևորգ Սոկրատի Գյագունցի պաշտպանական իրավունքը՝ առանց պաշտպանի հարցաքննվել է նույն օրը ժամը 19.35-ից 20.55-ը, որին նույնպես նպաստել է փաստաբան Գարեգին Աշոտի Բաբայանի կողմից առանց մասնակցելու այդ արձանագրության տակ ստորագրելու հանգամանքը:

Նույն քրեական գործով նույն քննիչի կողմից շարունակվել է ոտնահարվել նաև 18.10.2013թ.-ին կասկածյալ Զավեն Վալերիկի Բադիրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ 21.10.2013թ.-ին կասկածյալ Գևորգ Սոկրատի Գյագունցին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու քննչական գործողությունների ժամանակ: Նույն ձևով քննիչի կողմից կազմած պաշտպանից հրաժարվելու արձանագրությունը ստորագրել է **նույն փաստաբան Գարեգին Աշոտի Բաբայանը**, այս անգամ նպաստելով մեղադրյալների պաշտպանական իրավունքի խախտմանը, քանի որ նրանք զրկված լինելով պաշտպան ունենալու հնարավորությունից, ինչպես որպես կասկածյալ եղած ժամանակ, այնպես էլ որպես մեղադրյալ հարցաքննվելիս չեն կարողացել իրականացնել իրենց պաշտպանական իրավունքները, որի արդյունքում կատարել են քննիչի պահանջը և փաստական հանգամանքները գրել են քննիչի թելադրանքով:

Այսպիսով, քննիչն օգտվելով **փաստաբան Գարեգին Աշոտի Բաբայանի** կողմից մատուցած իր համար նպաստավոր ծառայությունից, շարունակել է ոտնահարել նույն գործով մեղադրյալներ Զավեն Վալերիկի Բադիրյանի և Գևորգ Սոկրատի Գյագունցի պաշտպանական իրավունքը, օգտվելով **"հերթապահ"** փաստաբան Գարեգին Աշոտի Բաբայանի ստորագրություններից, ինչպես որպես կասկածյալ, այնպես էլ որպես մեղադրյալ հարցաքննելիս ինչպես Զավեն Վալերիկի Բադիրյանին, այնպես էլ Գևորգ Սոկրատի Գյագունցին ուղորդել է և գրել է տվել այլ փաստական հանգամանքներ, համոզելով, որ լավ կլինի: Դատաքննության ժամանակ Զավեն Վալերիկի Բադիրյանը և Գևորգ Սոկրատի Գյագունցը ցուցմունքներ տվեցին այն մասին, որ իրենց նախաքննական ցուցմունքները գրելիս քննիչն իրենց ուղորդել և թելադրել է:

Ըստ վերջիններիս կողմից դատաքննության ժամանակ տված ցուցմունքների, քննիչն առանձնապես շատ բան չի ջանացել, իրական փաստական հանգանանքներին միայն ավելացրել և իրենց գրել է տվել, որ Զավեն Վալերիկի Բադիրյանը սիգարետի մեջ թմրամիջոցը լցնելուց հետո ավելացած թմրամիջոցը առաջարկել է Գևորգ Սոկրատի Գյագունցին, սակայն վերջինս հրաժարվել է, ինչպես նաև գրել է տվել, որ Զավեն Վալերիկի Բադիրյանը թմրամիջոցը օգտագործելու ժամանակ հյուրասիրել է նաև Գևորգ Սոկրատի Գյագունցին, վերջինս նույնպես օգտագործել է և վերադարձրել սիգարետը:

Դատաքննության ընթացքում Զավեն Վալերիկի Բադիրյանը և Գևորգ Սոկրատի Գյագունցը հայտնեցին նաև, որ իրականում միայն Զավեն Վալերիկի Բադիրյանն է օգտագործել իր հավաքած կանեփի տերևները, սիգարետի մեջ լցնելուց հետո մնացած թմրամիջոցն Զավեն Վալերիկի Բադիրյանը լցրել է ցելաֆոնի մեջ և դրել իր ավտոմեքենայի փոխանցման տուփի մոտ, որից հետո Զավեն Վալերիկի Բադիրյանը վառել է թմրամիջոցով լցված սիգարետը, մի երկու անգամ ծխել և հենց այդ պահին էլ իրենց ավտոմեքենային են մոտեցել ոստիկանության աշխատողները և իրենց բերման ենթարկել ոստիկանություն: Գևորգ Սոկրատի Գյագունցը հայտնել է նաև, որ ոստիկանների մոտենալու ժամանակ ինքը ավտոմեքենայի փոխանցման տուփի մոտից վերցրել է Զավեն Վալերիկի Բադիրյանի կողմից դրած թմրամիջոցը ոստիկաններից թաքցնելու համար և դրել իր գրպանը, ինչը չի տեսել Զավեն Վալերիկի Բադիրյանը:

Այսպիսով, փաստաբան Գարեգին Աշոտի Բաբայանը նույն քրեական գործով չորս անգամ ստորագրել է պաշտպանից հրաժարվելու մասին արձանագրությունները ներկա չգտնվելով դրանց կազմելուն, ընդամենը մեկ անգամ ներկայացնելով իր արտոնագրի, հավատարմագրի և վկայականների պատճենները:

Անհասկանալի է, թե փաստաբան Գարեգին Աշոտի Բաբայանն ինչպես է ստորագրել կասկածյալի և մեղադրյալի կարգավիճակում եղած անձանց կողմից պաշտպանից հրաժարվելու արձանագրությունները, երբ նրանք իրեն չեն տեսել, իրենք կամ իրենց հարազատները չեն հրավիրել:Փաստորեն փաստաբան Գարեգին Աշոտի Բաբայանի կողմից մատուցած ծառայության արդյունքում քննիչը թույլ տալով պաշտպանական իրավունքի խախտումներ ստեղծել է թմրամիջոցի իրացման ծանր հանցագործության կատարման փաստ ընդամենը ավելացնելով առաջարկելու հանգամանքը և արդյունքում Զավեն Վալերիկի Բադիրյանը դարձել է 0,72 գրամ մարիխուաննայի իրացնող, այն դեպքում, երբ ցելաֆոնի մեջ եղած թմրամիջոցը ըստ փորձագետների եղել է 0,58 գրամ, իսկ սիգարետի մեջ եղածը՝ 0,14 գրամ, ընդ որում սիգարետ հյուրասիրելը բացակայում է մեղադրանքի ծավալից:

Ամբողջ հարցը նրանում է, որ եթե չխախտվեր իմ պաշտպանյալ Զավեն Վալերիկի Բադիրյանի պաշտպանական իրավունքը, ապա դեռևս նախաքննության փուլում գործով ի հայտ կգար ճշմարտությունը և նրան անտեղի մեղադրանք չէր առաջադրվի իր չարածի համար:

Վերը նշված անհասկանալին հասկանալի է դարձել, երբ նախաքննության փուլից գործն անցել է դատաքննության փուլ, որտեղ առանց փաստաբանական ծառայության մատուցման պայմանագիր կնքելու փաստաբան Գարեգին Աշոտի

Բաբայանը քրեական գործի ճակատագիրը նախաքննական մարմնի համար փրկելու և գործով դատավճռի կայացումը կասկածի տակ չդնելու համար ինքնակոչ, առանց ամբաստանյալի հրավերի և կարծիքը հ արցնելու մասնակցել է Զավեն Վալերիկի Բադիրյանի դատաքննությանը: Դատարանը նույնպես շահագռգռված լինելով գործի ելքով, անգամ չի հարցրել, թե արդյոք ամբաստանյալը համաձայն է, որ իր շահերը պաշտպանի փաստաբան Գարեգին Աշոտի Բաբայանը: Զավեն Վալերիկի Բադիրյանի պնդմամբ դատական նիստի ժամանակ փաստաբան Գարեգին Աշոտի Բաբայանը դատարանի դահլիճում նստել է իր կողքին, ինքն իմացել է, թե նա դատարանի աշխատող է: Վերջինս դատական նիստի ժամանակ իր կողմից նախապես պատրաստած տպագիր տեքստում ամբաստանյալի անուն ազգանունը և հայրանունը ձեռագրով ավելացնելուց հետո պահանջել է, որ վերջինս ստորագրի արագացված դատաքննություն անցկացնելու միջնորդության տեքստի տակ,ասելով որ լավ կլինի,որից հետո դատարանին ներկայացնելով այդ “թղթի կտորը” անձամբ միջնորդել է արագացված դատաքննություն անցկացնել և արդյունքում Զավեն Վալերիկի Բադիրյանը դատապարտվել երեք տարի ազատազրկման: Վերաքննիչ բողոքի հիման վրա պաշտպանական իրավունքը խախտվելու հիմքով դատավճիռը բեկանվել և քրեական գործն ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան նոր քննության, որի ժամանակ էլ ի հայտ են եկել վերը նշված հանգամանքները:

ՀՀ փաստաբանների պալատի հարգարժան նախագահ, խնդրում եմ հայտնել՝

1. ՀՀ ՊՆ ՔԾ 9-րդ կայազորային քննչական բաժնի քննիչ Ն.Խաչատրյանի վարույթում քննված թիվ 90553213 քրեական գործով ՀՀ փաստաբանների պալատ կամ հանրային պաշտպանի գրասենյակ պաշտպան ներգրավվելու մասին դիմում ներկայացվել է ,թե ոչ, եթե ներկայացվել է, ապա խնդրում եմ հայտնել, թե նշված քրեական գործով ՀՀ փաստաբանների պալատում հավատարմագրված փաստաբան Գարեգին Աշոտի Բաբայանն է պաշտպան նշանակվել է թե այլ փաստաբան:
2. Ինչ հիմքերով է Գարեգին Աշոտի Բաբայանը ստորագրել նույն քրեական գործով ինչպես որպես կասկածյալների, այնպես էլ որպես մեղադրյալների կողմից պաշտպան չցանկանալու չորս արձանագրություններն այն դեպքում, երբ ըստ Զավեն Վալերիկի Բադիրյանի և Գևորգ Սոկրատի Գյագունցի փաստաբան Գարեգին Աշոտի Բաբայանը ներկա չի էլ եղել այդ արձանագրությունները կազմելուն:
3. Արդյոք իր գործողություններով Գարեգին Աշոտի Բաբայանը չի զրկել Զավեն Վալերիկի Բադիրյանին և Գևորգ Սոկրատի Գյագունցին օրինական պաշտպան ունենալու և իրենց պաշտպանական իրավունքներն իրականացնելու հնարավորությունից թե՛ կասկածյալի և թե՛ մեղադրյալի կարգավիճակում եղած ժամանակ:
4. ՈՒՄ կողմից է հրավիրվել փաստաբան Գարեգին Աշոտի Բաբայանը, եթե նրան չեն հրավիրել ո՛չ Զավեն Վալերիկի Բադիրյանը և ո՛չ Գևորգ Սոկրատի Գյագունցը, որոնք եղել են ազատության մեջ: Անտրամաբանական է իրենց կողմից հրավիրած փաստաբանից հրաժարվելու փաստը:
5. Ինչու է փաստաբան Գարեգին Աշոտի Բաբայանը քննիչի հրավերով

ներկայացել և չորս անգամ ստորագրել պաշտպանից հրաժարվելու արձանագրությունները: Ինչպես Զավեն Վալերիկի Բադիրյանի, այնպես էլ Գևորգ Սոկրատի Գյագունցի պնդմամբ փաստաբան Գարեգին Աշոտի Բաբայանը հրավիրվել է քննիչի կողմից, սակայն նա ոչ թե հրավիրվել է պաշտպան ունենալու իրավունքները բացատրելու քննչական գործողություն-ներին մասնակցելու համար, այլ արդեն իսկ կազմած պաշտպանից հրաժարվելու արձանագրությունների տակ ստորագրելու համար, քանի որ իրենք փաստաբան Գարեգին Աշոտի Բաբայանին ընդհանրապես չեն տեսել քննիչի մոտ:

6. Փաստաբան Գարեգին Աշոտի Բաբայանն առանց մասնակցելու պաշտպան ունենալու իրավունքները բացատրելու քննչական գործողություններին իր ստորագրությամբ ինչու է հաստատել Զավեն Վալերիկի Բադիրյանի և Գևորգ Սոկրատի Գյագունցի կողմից պաշտպանից հրաժարվելու փաստը, իր գործողություններով ինչու է նրանց զրկել պաշտպանվելու հնարավորությու-նից:
7. Փաստաբան Գարեգին Աշոտի Բաբայանն ինչու է համագործակցել քննիչի, դատախազի և դատավորի հետ, արդյոք այս հանգամանքները եզակի են, թե փաստաբան Գարեգին Աշոտի Բաբայանը Սյունիքի մարզում բոլոր գործերով է սատար կանգնում քննիչներին, դատախազներին և դատավորներին իրենց չհիմնավորված գործերը հիմնավորելու գործում և արդյոք այս հանգամանքների մասին տեղյակ է ՀՀ փաստաբանների պալատը:

Հայտնում եմ նաև, որ սույն գործով հաջորդ դատական նիստը կայանալու է 02.07.2014թ. ժամը 15.30-ին Կապան քաղաքում և խնդրում եմ սույն հարցման ընթացքի մասին պատասխանը հանձնել առձեռն, հնարավորինս կարճ ժամկետում:

<u>26.08.2014թ-ին փաստաբան Ռոբերտ Բեջանյանը ՀՀ Փաստաբանների պալատ է մուտք արել թիվ 6 գրությունը, որի բովանդակությունը կայանում է հետևյալում</u>.

<< Հայտնում եմ Ձեզ, որ 30.06.2014 թվականին թիվ 2 գրությամբ հարցում է կատարվել այն մասին, թե ՀՀ ՊՆ ՔԾ 9-րդ կայազորային քննչական բաժնի քննիչ Ն.Խաչատրյանի վարույթում քննված թիվ 90553213 քրեական գործով ՀՀ փաստաբանների պալատ կամ հանրային պաշտպանի գրասենյակ պաշտպան ներգրավվելու մասին դիմում ներկայացվել է, թե ոչ, եթե ներկայացվել է, ապա նշված քրեական գործով ՀՀ փաստաբանների պալատում հավատարմագրված փաստաբան Գարեգին Աշոտի Բաբայանն է պաշտպան նշանակվել, թե այլ փաստաբան: Նշված հարցմանը ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից 08.07.2014թ. թիվ ԱՂ/916 գրությամբ պատասխան է ուղարկվել այն մասին, որ նշված քրեական գործով հանրային պաշտպան ներգրավված չէ: Նույն գրությամբ հայտնվել է նաև, որ բարձրացված մնացած հարցերին ՀՀ փաստաբանների պալատը պատասխանել չի կարող:

Պատասխանը պարունակում է նաև Հ.Գ այն մասին, որ “ԼՂՀ փաստաբան Գարեգին Աշոտի Բաբայանի հասցեին հնչեցված մեղադրանքներին սույնով չենք անդրադառնում, քանի որ Ձեր դիմումում նման խնդրանք ներառված չէ”:

Ի լրումն 30.06.2014 թվականին թիվ 2 գրության, հայտնվում է, որ ՀՀ

փաստաբանների պալատում հավատարմագրված ԼՂՀ փաստաբան Գարեգին Աշոտի Բաբայանի հասցեին ոչ թե հնչեցվել են մեղադրանքներ, այլ Ձեզ են ներկայացվել քրեական գործի նախաքննության և դատաքննության ժամանակ կատարված փաստերը:

Իմ պաշտպանյալ Զավեն Վալերիկի Բադիրյանի հետ խորհրդակցելուց հետո որոշվեց, որ կրկին անգամ դիմենք Ձեզ քրեական գործի նախաքննության և դատաքննության ժամանակ կատարված և 30.06.2014 թվականին թիվ 2 գրությամբ հայտնված փաստերի կապակցությամբ նրա նկատմամբ վարույթ հարուցելու և նրան համապատասխան պատասխանատվության ենթարկելու համար, քանի որ վերջինիս մեղքով Զավեն Վալերիկի Բադիրյանը շուրջ ինը ամիս պայքարում է իր խախտված իրավունքները վերականգնելու համար և պարզ չէ, թե ի վերջո արդարության կհասնի, թե ոչ:

Կից ներկայացնում եմ 30.06.2014 թվականի թիվ 2 գրության պատճենը և հայտնում, որ ՀՀ փաստաբանների պալատում հավատարմագրված ԼՂՀ փաստաբան Գարեգին Աշոտի Բաբայանի կողմից թույլ տված դատավարական և փաստաբանի վարքագծի կանոնների կոպիտ խախտումները ծանր վիճակում են դրել Զավեն Վալերիկի Բադիրյանին, ով պայքարում է իր օրինական շահերը և խախտված իրավունքները վերականգնելու համար:

02.07.2014 թվականի դատական նիստի ժամանակ քննիչ Ն.Խաչատրյանը ցուցմունք տվեց այն մասին, որ ինքն է հրավիրել փաստաբան Գարեգին Աշոտի Բաբայանին, ինչպես կասկածյալ, այնպես էլ մեղադրյալ Զավեն Վալերիկի Բադիրյանին պաշտպանական իրավունքները բացատրելու համար, թեև վերջինս քննիչի ներկայությամբ դատարանում հայտարարեց, որ ինքը ոչ մի փաստաբան էլ չի տեսել, առավել ևս Գարեգին Բաբայանին:

Կից ներկայացնում եմ 02.07.2014 թվականի դատական նիստի ժամանակ քննիչ Ն.Խաչատրյանի ցուցմունքի ձայնագրառման կրիչը, որտեղ քննիչը ցուցմունք է տալիս, որ ինքն է հրավիրել փաստաբան Գարեգին Աշոտի Բաբայանին և խնդրում եմ վարույթ հարուցել, պարզել, թե ինչի համար է փաստաբան Գարեգին Աշոտի Բաբայանը վարույթն իրականացնող մարմնի հետ համագործակցելով զրկել Զավեն Վալերիկի Բադիրյանին պաշտպանական իրավունքից, որից էլ ըստ վերջինիս հայտարարության, օգտվել է քննիչ Ն.Խաչատրյանը և ուղորդել Զ.Բադիրյանի և գործող վկայի (թմրանյութը փոխանցման տուփի մոտից վերցնողի) ցուցմունքները, որոնք դատարանում տվել են նախաքննական ցուցմունքներին ճիշտ հակառակ ցուցմունքներ, որ թմրանյութի առաջարկություն և հյուրասիրություն չի եղել:

Ընդ որում նախաքննական ցուցմունքները քննիչի կողմից կորզվել են առանձին արտահայտությունների տեսքով: Մասնավորապես թմրանյութ առաջարկելու արտահայտությամբ, որը հետագայում ընդունվել է որպես թմրանյութի իրացում, թեև վկան նախաքննական ցուցմունքներում հայտնել է, որ ինքը այդ թմրանյութը ավտոմեքենայի փոխանցման թուփի մոտից վերցրել է ոստիկանությունից թաքցնելու նպատակով, որը պետք է դներ իր տեղը ոստիկանների գնալուց հետո:

Չցանկանալով խորանալ գործի նյութերի բովանդակության մեջ, գտնում ենք, որ փաստաբան Գարեգին Աշոտի Բաբայանը համագործակցել է քննիչի հետ Զավեն

Վալերիկի Բաղիրյանին ծանր հանցագործություն վերագրելու հարցում, առավել ևս, որ դատարանում առանց վերջինիս համաձայնության մասնակցել է որպես պաշտպան, պահանջել արագացված դատաքննություն և Զավեն Վալերիկի Բաղիրյանին պարգևել 3 տարի ազատազրկում, սակայն վերաքննիչ դատարանի անաչառության շնորհիվ բեկանվել է դատավճիռը պաշտպանական իրավունքի խախտման հիմքով արագացված դատաքննություն անցկացնելու պատճառով:

Իմ պաշտպանյալը խնդրում է նաև պատասխանատվության ենթարկել փաստաբան Գարեգին Աշոտի Բաբայանին, որին միանում եմ նաև ես: >>

Կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում նույնպես Ռ.Բեջանյանը բացատրություն է տվել հետևյալ բովանդակությամբ.

<<Բացատրություն եմ տալիս այն մասին, որ հանդիսանում եմ ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ դատարան) ՍԴ3/0156/01/13 քրեական գործով ամբաստանյալ Զավեն Վալերիկի Բաղիրյանի շահերի պաշտպանը:

Զավեն Վալերիկի Բաղիրյանը ծնվել է 26.04.1990թ. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաքում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, ութնամյա կրթությամբ, նախկինում չդատված, խնամքին երկու դեռահաս երեխաներ՝ Ժասմին Զավեն Բաղիրյան ծնված 23.01.2012թ. և Նանե Զավեն Բաղիրյան ծնված 16.01.2014թ., բնակվում է ՀՀ Սյունիքի մարզ, ք.Գորիս, Քրիստափորի փող., տուն 24):

Դատարանը 2013 թվականի դեկտեմբերի 17-ին փաստաբան Գարեգին Բաբայանի միջնորդությամբ անցկացնելով արագացված դատական քննություն Զավեն Վալերիկի Բաղիրյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն կատարելու մեջ և պատիժ է նշանակել ազատազրկում 3 /երեք/ տարի ժամկետով (կից ներկայացնում եմ դատավճռի պատճեն, **հավելված 1):**

Դատարանի դատավճռի դեմ 16.01.2014թ. վերաքննիչ բողոք է ներկայացվել: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2014 թվականի մարտի 28-ի որոշմամբ բավարարել է վերաքննիչ բողոքը և բեկանել դատարանի 17.12.2013թ. դատավճիռն այն հիմնավորմամբ, որ փաստաբան Գարեգին Բաբայանը դատարանում գործի քննությանը մասնակցել է որպես ամբաստանյալ Զ.Բաղիրյանի պաշտպան՝ առանց վերջինիս հստակ ու կամավոր ցանկությամբ: Վերաքննիչ դատարանը գտել է նաև, որ գործում բացակայում են փաստաբան Գարեգին Բաբայանի՝ սույն գործով վարույթին մասնակցելու օրինական հիմքերը: Վերաքննիչ դատարանը հանգել է այն հետևության, որ փաստաբան Գ.Բաբայանը դատաքննությանը մասնակցել է առանց օրինական հիմքերի, որի արդյունքում խախտվել է ամբաստանյալի պաշտպանության իրավունքը և այդ հիմքով էլ բեկանել է դատավճիռը և գործն ուղարկել է նույն դատարան այլ կազմով նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը (կից ներկայացնում եմ վերաքննիչ բողոքի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 28.03.2014թ. որոշման պատճենները **հավելված 2, 3)**:

Բեկանված քրեական գործը կրկին քննվել է նույն դատարանում՝ այլ կազմով, որի քննության ընթացքում **մեղադրողի միջնորդությամբ դատարան հրավիրված** քրեական գործով քննիչ Նարեկ Խաչատրյանը ցուցմունք տվեց այն մասին, որ **ինքն է իր աշխատասենյակ հրավիրել փաստաբան Գարեգին Բաբայանին** ինչպես

Զավեն Վալերիկի Բադիրյանի, այնպես էլ Գևորգ Սոկրատի Գյագունցի որպես կասկածյալ պաշտպան ունենալու իրավունքները բացատրելու համար և կազմել պաշտպանից հրաժարվելու արձանագրություններ:

Քննիչ Ն.Խաչատրյանը հայտնեց նաև, որ նույն գործով մեղադրյալների կարգավիճակում գտնվող ինչպես Զավեն Վալերիկի Բադիրյանին, այնպես էլ Գևորգ Սոկրատի Գյագունցին պաշտպան ունենալու իրավունքները բացատրելու համար **փաստաբան Գարեգին Բաբայանին ինքն է հրավիրել** և կրկին արձանագրություններ է կազմել, որ նրանք հրաժարվում են պաշտպանից **(**կից ներկայացնում եմ պաշտպանական ճառի պատճենը և դատարանի կողմից տրամադրած ձայնագրառման կրիչի կրկնօրինակից ձայնագրառված 02.07.2014թ. դատական նիստի ձայանագրառման պատճենը կրիչի վրա **հավելված 4, 5, 6)**:

Նշված՝ 02.07.2014թ. դատական նիստի ձայնագրառման ժամը 16.19.26-ի 3-րդ, 9-րդ, 15-րդ և ժամը 16.34.26-ի 4-րդ, 10-րդ, 16-րդ հերթական ձայնագրառումներով քրեական գործով քննիչ Նարեկ Խաչատրյանը հայտնում է, որ ինքն է իր աշխատասենյակ հրավիրել փաստաբան Գարեգին Բաբայանին ինչպես Զավեն Վալերիկի Բադիրյանի, այնպես էլ Գևորգ Սոկրատի Գյագունցի և՛ որպես կասկածյալ և՛ որպես մեղադրյալ եղած կարգավիճակում պաշտպան ունենալու իրավունքը նրանց բացատրելու համար, մատնանշելով, որ եթե նրանք ցանկանային, որ իր հրավիրած փաստաբան Գարեգին Բաբայանը լիներ իրենց պաշտպանը, ապա ինքը դա կընդուներ, քանի որ նրանք հրաժարվել են պաշտպանից, ինքն էլ արձանագրել է:

Նշված՝ 02.07.2014թ. դատական նիստի ձայնագրառման ժամը 16.34.26-ի 4-րդ, 10-րդ և 16-րդ հերթական ձայնագրառումների վերջնամասերում Զավեն Վալերիկի Բադիրյանը քննիչի ներկայությամբ դատարանին հայտնում է, որ ինքը քննիչի մոտ չի տեսել փաստաբան Գարեգին Բաբայանին և նրան չի ճանաչել, այնուհետև քննիչին հարց է տվել, որ եթե փաստաբան Գարեգին Բաբայանը եղել է, ապա ինչ տեղում է եղել, որ ինքը չի տեսել: Քննիչը պատասխանում է, որ ինքը Բաբայան Գարեգինին ապահովել է:

Իմ պաշտպանյալին հայտնեցի, որ իր խնդրանքով ՀՀ փաստաբանների պալատին իմ կողմից ներկայացրած հաղորդման հիման վրա փաստաբան Գարեգին Բաբայանի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել և նրան ներկայացրեցի ինձ ուղարկված պարզաբանումները և ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 12.09.2014թ. թիվ 323-Ա/ԿԳ-14116 որոշումը: Այնուհետև, Իմ պաշտպանյալին պարզաբանեցի, որ պետք է բացատրություն գրի, նա ինձ հայտնեց, որ փաստաբան Արշակ Թովմասյանից գրություն է ստացել բացատրություն գրելու համար ներկայանալ, կամ փոստով ուղարկել իր գրած բացատրագիրը, սակայն ֆինանսական վատ վիճակի պատճառով չի կարող Երևան քաղաք գալ, իսկ բացատրությունը գրավոր չի կարող գրել, քանի որ անգրագետ է և մտքերը չի կարող ձևակերպել: Երբ նրան ծանոթացրեցի ինձ տրամադրած՝ փաստաբան Գարեգին Բաբայանի գրած բացատրության հետ, որ ըստ այդ բացատրության ինքը դեռևս նախաքննության ընթացքում դիմել է փաստաբան Գարեգին Բաբայանին, որ իր շահերը պաշտպանի, նա բարկացավ ու ասաց, որ սուտ է ասում Գարեգին

Բաբայանը, որ ինքը նրան չի դիմել, նրան քննիչի մոտ չի տեսել և չի ճանաչել: Նա Գարեգին Բաբայանին տեսել է դատարանում, երբ եկել է իր կողքին նստել, ինքն իմացել է, թե դատարանի աշխատող է, չի իմացել, որ փաստաբան է: Հետո նա մի թուղթ է հանել դատի ժամանակ, իր անուն ազգանունը լրացրել ու դատարանին ասել է, որ արագացված դատ անեն, որ փակվի էս գործը: Նա իրեն ասել է, որ դատի ժամանակ ինչ ասեմ կկրկնես: Ինքը ստորագրել է նրա տված թղթի տակ ու դատի ժամանակ ինչ հարց իրեն տվել են, նա իրեն հուշել է, ինքն էլ կրկնել է (կից ներկայացվում է այդ միջնորդության պատճենը, **հավելված** 7):

Նա խնդրեց, որ հայտնեմ, որ այդ մասին ինքը գրել է վերաքննիչ բողոքում և հայտնել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանին պատասխանելով նաև դատարանի կողմից տրված հարցերին և խնդրեց, որ այդ թղթի, Գորիսի դատարանի դատավճռի, վերաքննիչ բողոքի, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշման պատճենները տրամադրեմ փաստաբան Արշակ Թովմասյանին:

Իմ պաշտպանյալ Զավեն Վալերիկի Բադիրյանը խնդրեց նաև փաստաբան Արշակ Թովմասյանին տրամադրեմ նաև դատարանի 02.07.2014թ. դատական նիստի ձայնագրառումը, որտեղ քննիչ Ն.Խաչատրյանն անընդհատ պնդում էր, որ փաստաբան Գարեգին Բաբայանին ինքն է իր աշխատասենյակ՝ իր մոտ կանչել: Նա հայտնեց, նաև, որ փաստաբան Գարեգին Բաբայանը սուտ է ասում, որ ինքը նրա հետ գնացել է քննիչի մոտ, որ ինքը քննիչի մոտ փաստաբան Գարեգին Բաբայանին ոչ մի անգամ չի տեսել:

Իսկ, երբ ես նրան հայտնեցի, որ փաստաբան Գարեգին Բաբայանից բացի Գորիս քաղաքի բնակիչ Արմեն Ավետիսյան անունով մի քաղաքացի նույնպես բացատրություն է տվել, որ ինքը հոկտեմբեր ամսին երբ եղել է փաստաբան Գարեգին Բաբայանի մոտ նրա աշխատասենյակ է եկել Գորիս քաղաքի բնակիչ Զավեն Վալերիկի Բադիրյանը, որին դեմքով գիտի որպես Գորիսի բնակիչ և Գ.Բաբայանի հարևան խնդրել է, որ նա իր հետ գա քննչական վարչություն: Իրենք երեքով գնացել են, նրանք երկուսով մտել են քննիչի մոտ, ինքը սպասել է դրսում, կես ժամ հետո երկուսով դուրս են եկել և իր ներկայությամբ Զավեն Բադիրյանն ասել է, որ բայց դատարանում անպայման կպաշտպանեք իմ շահերը:

Նախ, նա հայտնեց, որ փաստաբան Գարեգին Բաբայանի հետ հարևաններ չեն, որ նրա դեմ բողոքելուց հետո է իմացել, որ փաստաբան Գարեգին Բաբայանը ապրում է իրենց տանից 400-500 մետր ներքևում գտնվող շենքերում, իսկ ինքը ապրում են սեփական տանը:

Նա հայտնեց նաև, որ այդ պատմությունը հորինել են, սուտ է, որ ինքը ոչ մի Արմեն Ավետիսյան էլ չի ճանաչում, թող գա աառաջս կանգնի ու ասի, որ ինձ ճանաչում է: Եթե այդ վկան ինձ դեմքով է ճանաչում, ոնց է գրել իմ անուն, հայրանուն և ազգանունը: Դա Գարեգին Բաբայանի սարքածն է: Եթե դա ճիշտ լիներ, որ ես եմ տարել փաստաբան Գարեգին Բաբայանին, ինչի էի հրաժարվում նրանից: Եթե փողի պատճառով էի հրաժարվում ու ինքն էլ իբր ինձ բացատրել է, որ գնամ անվճար հանրային պաշտպանի դիմեմ, էլ ինքն ինչի էր գալիս ինձ հետ, չգիտեր, որ իրանից բացի քննիչ էլ կա, որը դատարանում ցուցմունք տվեց, որ ինքն է փաստաբան Գարեգին Բաբայանին կանչել իր մոտ:

Իմ պաշտպանյալ Զավեն Վալերիկի Բադիրյանը հայտնեց, որ ինքը Երևան

քաղաք է գալու սույն թվականի նոյեմբերի 28-ին վերաքննիչ բողոքը ստորագրելու և ՀՀ վերաքննիչ քրեական դատարան հանձնելու համար, որ այդ օրը ինքը կարող է իր հայտնածը հայտնել նաև փաստաբան Արշակ Թվմասյանին և ՀՀ փաստաբանների պալատին:

Իմ պաշտպանյալ Զավեն Վալերիկի Բադիրյանը պնդեց, որ ինքը փաստաբան Զավեն Վալերիկի Բադիրյանին չի տեսել քննիչի մոտ, ինքը նրան չի խնդրել, որ իր շահերը պաշտպանի, իսկ հետո էլ չի հայտնել, որ նարնից հրաժարվում է, քննիչն ինչ թուղթ տվել է,ինքն էլ ստորագրել է, քանի, որ ասել է, որ ստորագրի, ինչ ասում եմ գրի, գնալու էս տուն, ես չեմ իմացել և չեմ հասկացել, որ իմ գլխին սարքում են:

Ես դիմել եմ ՀՀ փաստաբանների պալատի նախագահ պարոն Արա Զոհրաբյանին, որ դիմող ճանաչվի Զավեն Վալերիկի Բադիրյանը, սակայն դիմումս չի բավարարվել, այնուամենայիվ ես միանում եմ իմ պաշտպանյալին, ով վերը նշված հանգամանքները պնդել է նաև ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում և Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում:

Այսպիսով, փաստաբան Գարեգին Բաբայանի ներկայացրած փաստարկներն անհիմն են, շինծու, կամ ինչպես նշում է իմ պաշտպանյալը՝ սարքած :

Փաստաբան Գարեգին Բաբայանի կողմից իր բացատրության մեջ իմ հասցեին նշած՝ “սկսում է իմ նկատմամբ հալածական, վիրավորական, զրպարտչական գործողություններ կատարել” արտահայտության վերաբերյալ նրան խորհուրդ կտայի արդարացի և լուրջ մոտենար կատարված դեպքերին, ծանոթանար կից ներկայացված ապացույցներին, որից հետո նոր միայն կեղծ ապացույցներ ներկայացներ և չմոռանար, որ իր կատարած ոչ դատավարական գործողություն-ներով խախտվել է ամբաստանյալի պաշտպանական իրավունքը և որի հիման վրա էլ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշմամբ բեկանվել է դատավճիռը:

Ես և փաստաբան Գարեգին Բաբայանն իրար չենք ճանաչում, նույնիսկ իրար չենք տեսել: Հարց է առաջանում,որն է փաստաբան Գարեգին Բաբայանի տրամաբանությունը, երբ դատական մարմիններում վերը նշված փաստարկները պնդում է Զավեն Վալերիկի Բադիրյանը և ինքը դրանց մասին քաջատեղյակ է:

Անդրադառնալով վկա Արմեն Ավետիսյանի բացատրությանը, կարող եմ փաստել, որ անհեթեթություն է, որ իմ պաշտպանյալը և փաստաբան Գարեգին Բաբայանը միասին մտնեին քննիչի մոտ և երկուսով միասին դուրս գային: Բացատրության հեղինակը փաստաբանին փորձել է արդարացնել նաև դատաքննության հետ կապված, սակայն ոչ արժանահավատ ձևով:

Ինչպես ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում, այնպես էլ առաջին ատյանի դատարանում իմ պաշտպանյալի կողմից տված ցուցմունքներով հիմնավորվում է, որ փաստաբան Գարեգին Բաբայանը ներկա չի գտնվել իմ պաշտպանյալի պաշտպան ունենալու իրավունքը բացատրելու ժամանակ և քննիչի կողմից այդ մասին կազմած արձանագրությունները նա ստորագրել է հետո:

Գտնում եմ, որ սեփական մեղքը պետք չէ բարդել ուրիշի վրա և արդարացում փնտրել, առավել ևս,որ այդ մեղքը հիմնավորում են սույն բացատրության մեջ առաջ քաշված ապացույցները:

Իմ պաշտպանյալը հայտնեց նաև, որ համաձայն կլինի չշարունակել իր բողոքը, եթե փաստաբան Գարեգին Բաբայանը անկեղծորեն հայտնի

ճշմարտությունը և նշի, թե երբ և ինչու է քննիչի խնդրանքով ստորագրել այդ արձանագրությունները (կից ներկայացվում է 14.10.2013թ., 14.10.2013թ., 18.10.2014թ. և 21.10.2014թ. արձանագրությունների պատճենը, **հավելված 8,9,10,11**):

Բացատրությունը գրեցի իմ պաշտպանյալ Զավեն Վալերիկի Բադիրյանի պատմածով, դատավարության ընթացքում նրա տված ցուցմունքների և դատավարական փաստաթղթերի ու ձայնագրառումների հիման վրա, գտնում եմ, որ ճիշտ է և ստորագրում եմ:>>

Պատասխանողի բացատրությունները.

Կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում բացատրություն է տվել նաև Գարեգին Բաբայանը, որը մասնավորապես նշել է.

<<Տեղյակ եմ պահում Ձեզ, որ 25.09.2014թ.-ին ստացել եմ Ձեր կողմից ուղղարկված որոշման օրինակը իմ վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու հարցի կապակցությամբ:

Վերոհիշյալ բողոքի վերաբերյալ հայտնում եմ Ձեզ հետևյալը:

Ծանոթանալով բողոքի բովանդակությանը, իրազեկում եմ Ձեզ, որ ինձ է դիմել համաքաղաքացի, իմ բնակության մշտական վայրի հարևան Զավեն Վալերիկի Բադիրյանը, դատարանում իր շահերը պաշտպանելու համար: Ես անձամբ ճանաչում եմ նրան, շատ մոտիկից ճանաչում եմ նրա ծնողներին, ինչպես նաև նրա քրոջը՝ Ժաննա Վալերիկի Բադիրյանին, որին մտերիմները Նանո են կոչում: Դեռևս նախաքննության ընթացքում Զավեն Բադիրյանը դիմել էր ինձ նախաքննության ընթացքում իր շահերը պաշտպանելու խնդրանքով: Ես նրան համոզել եմ որպեսզի նա դիմի հանրային պաշտպանին, որովհետև սոցիալապես անապահով վիճակում է նրանց ընտանիքը, կինը գտնվում է հղի վիճակում, ունի մանկահասակ երեխա, հայրը վատառողջ է, մայրը ոչ մի տեղ չի աշխատում ընտանիքը գտնվում է նյութապես շատ ծանթ կացության մեջ:

Շատ մոտիկից ճանաչելով նրանց, որովհետև նրանք իմ հարևաններն են, համոզեցի որպեսզի օգտվի հանրային պաշտպանի անվճար օգնություն ստանալու: Իր ցանկությամբ մենք գնացինք դեռևս նոր նշանակված ՀՀ ՊՆ ՔԾ 9-րդ կայազորային քննչական բաժնի քննիչ Ն. Խաչատրյանի մոտ: Զավեն Բադիրյանը քննիչ Ն. Խաչատրյանին իմ ներկայությամբ հրաժարվեց պաշտպան ունենալու իրավունքից, միաժամանակ հրաժարվեց նաև հանրային պաշտպան ունենալու ցանկությունից: Սակայն իմ խորին համոզմամբ նա հրաժարվել էր փաստաբանի ծառայությունից, որովհետև վճարունակ չէր, սակայն ընդունում էր մեղքը իր կատարած հանցագործությունն ամբողջությամբ: Փաստաբանի ծառայությունից հրաժարվելու հանգամանքը ստորագրել ու հաստատել է նախաքննության ընթացքում: Այնուհետև 17.12.2013թ.-ին դատաքննությունից մի քանի ժամ առաջ իմ աշխատասենյակում համաձայնության ենք եկել բանավոր կարգով, որպեսզի ես իմ շահերը պաշտպանեմ դատարանում: Նախնական համաձայնությամբ պայմանավորվել էինք որպեսզի 50.000 ՀՀ դրամ վճարեր ինձ և կազմեինք պայմանագիր: Սակայն ամբողջ բարեկամությունը շուրջ 20 հոգուց

բաղկացած, այդպես էլ չկարողացան հայթհայթեն գումարը, որովհետև ես ինքս էլ համոզված եմ, որ նրանք վճարունակ չեն, մայրը վատառողջ է, հայրը ոչ մի տեղ չի աշխատում, կինը հղի վիճակում է, ունի նաև մանկահասա երեխա: Ի դեպ, դատաքննությունց անմիջապես ծննդաբերել է և ունեցել 2-րդ երեխան: Նրա ծնողների, քրոջ , մեր խնդրանքով ի նկատի ունենալով, որ նրանք իմ հարևաններն են, ապրում ենք միևնույն քաղաքում, բոլորս իրար ճանաչում ենք, ես համաձայնվեցի, որպեսզի նրա շահերը պաշտպանեմ դատարանում, իսկ դատից հետո նրա հարազատները կվճարեն իմ կողմից տրված ծառայությունների դիմաց: Դատաքննությունից առաջ ես նրան բացատրել եմ ՀՀ քր.- Դատ. օր.-ի 375 հոդվածի 1-ին և 2-րդ կետերի բովանդակությունները, նաև պարզաբանել եմ, որ մենք իրավունք ունենք բողոքելու միայն պատժի մասով: Նրա հարազատները ու ինքը և հատկապես քույրը՝ Ժաննա Բադիրյանը դժգոհ են դատավճռի բովանդակությունից, որովհետև դատարանը նրան դատապարտել է ազատազրկման պատժի նվազագույն չափի՝ 3 տարի, ազատազրկմամբ: Ես դատաքննության ժամանակ հանդես եմ եկել դատական ճառով և միջնորդել դատարանին, որպեսզի դատարանը նրա նկատմամբ կիրառի ՀՀ Քր. օր.-ի 70-րդ հոդվածը և տրված պատիժը կփոխարինվի պայմանական դատվածությամբ, կիրառվի փորձաշրջան և տրված փորձաշրջանի հսկողությունը մնա զորամասի հսկողությանը:

Դատաքննության ընթացքում ես թույլ էի տվել սխալ, փոխանակ ներկայացնելու թիվ 26 հավատարմագիրը, որն ուժի մեջ է 13.11.2014թ. սխալմամբ ներկայացրել եմ իմ նախկին հավատարմագրի պատճենը, որն ուժի մեջ էր մինչև 08.1202013թ.: Վերաքննիչ բողոքի այն մասը, որ ես նրան չեմ բացատրել արագացված դատաքննությու անցկացնելու կարգը, զրպարտություն է իմ հասցեին, վիրավորանք ու անպատվություն: Ի դեպ ինձ համար անհասկանալի էր, թե ինչու դատաքննությունից անմիջապես հետո, հաջորդ օրը փաստաբան Ռոբերտ Բեջանյանն անմիջապես պայմանագրով հանդես է գալիս որպես դատապաշտպան և նույնիսկ այդ մասին ես տեղյակ չէի: Այն, որ իմ նախկին պաշտպանյալը պատժից խուսափելու համար, առիթից օգտվելով ինձ է մատնացույց անում, որ ես օտարերկրացի փաստաբան եմ, և իրավունք չունեի դատավարությանը մասնակցելու ճիշտ չէ , սակայն ես արդեն իսկ մասնակցել եմ և իմ պարտականությունները կատարել եմ բարեխղճորեն: Ի դեպ ես տեղյակ եմ պահել Փաստաբանների պալատի ղեկավարությանը, որ ես սխալմամբ եմ ներկայացրել իմ հավատարմագիրը, ինչի համար զղջում եմ և իմ խորին համոզմամբ , ի ուրախություն և հոգու ցնծություն բերկրանք ստացած ՀՀ Փաստաբան ՀՀ Քրեական Վերաքննիչ դատարանում իմ փոխարեն հանդես եկող և այժմ էլ Զավեն Վալերիկի Բադիրյանի շահերի պաշտպան ոչ օտարերկրյա փաստաբան Ռոբերտ Բեջանյանի, համոզված եմ, որ ենթարկվելու եմ պատժի, ինչը և ես ընդունում եմ, սակայն ես դիտավորությամբ չեմ այն կատարել, իսկ որպես հայ որպես ծնող, նաև պապիկ, փաստաբան ՀՀ Քրեական վերաքննիչ դատարանին խնդրել էի, որպեսզի իմ նախկին պաշտպանյալի՝ Զավեն Վալերիկի Բադիրյանի նկատմամբ մեղմ պատիժ կիրառվեր, Զավեն Բադիրյանը դժգոհ էր առաջին ատյանի կայացած դատավճռից, որովհետև համոզված էր ինքը, որ պետք է նրա

նկատմամբ կիրառվեր ՀՀ քր. օր.-ի 70-րդ հոդվածը: Ի դեպ ես պատրաստվում էի վերաքննիչ բողոք ներկայացնելու, սակայն հետագայում իմանում եմ , որ Զավեն Բադիրյանի քույրը՝ Ժաննա Բադիրյանը արդեն իսկ պայմանագիր է կնքել ՀՀ Փաստաբան Ռոբերտ Բեջանյանի հետ և վերջինս հաշվի չառնելով, որ մենք կոլեգաներ ենք /կարեղ էր զանգահարել ինձ և ես ամենայն անկեղծությամբ այն ինչ կար զուտ ճշմարտությունը նրան կպատմեի/ սկսում է իմ նկատմամբ հալածական, վիրավորական, զրպարտչական գործողություններ կատարել: Այն է ՀՀ վերաքննիչ բողոքում նշում է, որ ես ստել եմ Զավեն Բադիրյանին չեմ բացատրել արագացված դատաքննություն անցկացնելու կարգը:

ՀՀ առաջի ատյանի դատարանում / դատավոր Դ. Գրիգորյան/ երբեք չէր արծածվել այն հարցը, որ իբր նախաքննության ընթացքում ինձ չէր տեսել, բայց չէ որ նրա խնդրանքով ենք մենք միասին գնացել Ն. Խաչատրյանի մոտ, որին ես բացարձակ չէի ճանաչում:

Իմ կոլեգա փաստաբան Ռոբերտ Բեջանյանի իմ նկատմամբ բռնած դիրքորոշումը ինձ համար ցավալի է: >>

4. <u>Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձի եզրակացությունը.</u>

Կարգապահական գործը հանձնվել է Պալատի կարգապահական գործ նախապատրաստող անձ Արշակ Թովմասյանին, ով 2014 թ. նոյեմբերի 11-ին կազմել է եզրակացություն, ըստ որի.

1.Կրիչի ձայնագրառման վերլուծությունից երևում է, որ դատաքննության ընթացքում գործով որպես վկա հարցաքննված քննիչ Ն.Խաչատրայնը մի քանի անգամ ի պատասխան պաշտպան Ռ.Բեջանյանի հարցմանը, պատասխանում է, որ իր նախաձեռնությամբ է հրավիրվել փաստաբան Գարեգին Բաբայանը:

2.Բացի այդ, որպես ամենագլխավոր ապացույց և հաստատված փաստական հանգամանք պետք է դիտել ՀՀ Վերաքննիչ դատարանի որոշումը, որտեղ դատարանը հաստատված է համարել, որ՝

Սույն քրեական գործի նյութերից, այդ թվում՝ առաջին ատյանի դատարանի դատական նիստի ձայնագրառման լազերային կրիչի ուսումնասիրությունից, ակնհայտ է դառնում, որ ամբաստանյալ Զ. Բադիրյանը՝ իրեն պաշտպանով ապահովելու միջնորդություն չի հարուցել: **Փաստաբան Գ. Բաբայանը սույն գործով վարույթին մասնակցել է որպես ամբաստանյալ Զ. Բադիրյանի շահերի պաշտպան՝ առանց վերջինիս հստակ ու կամավոր ցանկության: Գործում բացակայում է փաստաբան Գ. Բաբայանի՝ սույն գործով վարույթին մասնակցելու օրինական հիմքերը, մասնավորապես՝ ամբաստանյալի և նրա ազգականների խնդրանքը կամ համաձայնությունը, վերջինիս մասնակցությունը հաստատված չէ նաև այլ անձանց հրավերով:**

Վերոգրյալից հետևում է, որ փաստաբան Գ. Բաբայանը, ինչպես դատաքննությունից առաջ, այնպես էլ դատաքննության ընթացքում, օրենքով սահմանված կարգով, այն է՝ Դատարանի որոշմամբ չի ներգրավվել որպես

ամբաստանյալ Զ. Բադիրյանի շահերի պաշտպան և օժտված չլինելով այդպիսի իրավասությամբ, ներկայացրել է վերջինիս շահերը, որի արդյունքում խախտվել է ամբաստանյալի պաշտպանության իրավունքը:

Ելնելով վերոգրյալից, Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ սույն գործով առաջին ատյանի դատարանը, դատական նիստում համապատասխան որոշմամբ փաստաբան Գ. Բաբայանին չներգրավելով որպես ամբաստանյալ Զ. Բադիրյանի շահերի պաշտպան, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ, 68-րդ, 69-րդ, 70-րդ և 71-րդ հոդվածների պահանջների խախտում, ինչի արդյունքում խախտվել է ամբաստանյալի պաշտպանության իրավունքը, որն իր բնույթով էական է և կարող է ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով <<Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի մասին>> իրավական ակտի 13-րդ հոդվածի 2-րդ, 14-րդ հոդվածի 1-4-րդ, 15-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 17-րդ հոդվածի 1-ի ենթակետերով և 22-րդ հոդվածով՝ նախապատրաստողիս կողմից կազմվեց սույն Եզրակացությունը՝ հաստատված փաստերով և ապացույցներով, ներկայացվում է ՀՀ փաստաբանների պալատի Խորհրդին:

5 <u>Գործի փաստերը՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Դիմող Ռոբերտ Բեջանյանի 30.06.2014թ-ի և 26.08.2014թ-ի դիմումները, որոնց համաձայն վերջինս հատնել է, որ ԼՂՀ փաստաբան Գարեգին Բաբայանը թիվ 90553213 քրեական գործով ներգրավվել է որպես կասկածյալ, հետագայում մեղադրյալ Զավեն Բադիրյանի պաշտպան ՀՀ ՊՆ ՔԾ 9-րդ կայազորային քննչական բաժնի քննիչ Ն.Խաչատրյանի հրավերով և կատարել պաշտպանյալի շահերին հակասող գործողություններ:
2. Գործի նյութերում առկա է 4՝ կասկածյալին /կամ մեղադրյալին/ նրա պաշտպանության և պաշտպան ունենալու իրավունքը բացատրելու մասին>> արձանագրություններ, որոնց համաձայն կասկածյալներ /մեղադրյալներ/ Զավեն Վալերիկի Բադիրյանը և Գևորգ Սոկրատի Գյագունցը հայտարարել են, որ պաշտպան ունենալ չեն ցանկանում, արձանագրությունը ստորագրել է նաև փաստաբան Գարեգին Բաբայանը: Հատկանշական է, փաստաբան Գ.Բաբայանը կարգապահական գործի նախապատրաստման և քննության

ընթացքում չի ներկայացրել ապացույց, առ այն, որ Զ.Բադիրյանը կամ Գ.Գյարունցը կամ նրանց հարազատները իրեն դիմած լինեին մեղադրյալների պաշտպանություն իրականացնելու համար:

3. Միջնորդություն՝ արագացված կարգով դատական քննություն իրականացնելու մասին: Հատկանշական է, որ միջնորդությունը նախօրոք է կազմված, տիպային է և այնտեղ ձեռագիր լրացվել է՝ դատավորի ազգանունը, ամբաստանյալի ազգանունը, ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածը:
4. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 28.04.2014թ-ի որոշումը, համաձայն որի քրեական գործով ըստ մեղադրանքի Զ.Բադիրյանի Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը թույլ է տվել պաշտպանական իրավունքի խախտում , որը և հիմք է հանդիսացել դատավճիռը բեկանելու համար: Վերաքննիչ դատարանի որոշման պատճառաբանական մասում նշված է. <<... Վերոգրյալից հետևում է, որ փաստաբան Գ. Բաբայանը, ինչպես դատաքննությունից առաջ, այնպես էլ դատաքննության ընթացքում, օրենքով սահմանված կարգով, այն է՝ Դատարանի որոշմամբ չի ներգրավվել որպես ամբաստանյալ Զ. Բադիրյանի շահերի պաշտպան և օժտված չլինելով այդպիսի իրավասությամբ, ներկայացրել է վերջինիս շահերը, որի արդյունքում խախտվել է ամբաստանյալի պաշտպանության իրավունքը: ...>>:
5. Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատական նիստերի ձայնագրառման կրիչը, որի վերատադրմամբ ակնհայտ է, որ ամբաստանյալ Զ. Բադիրյանը՝ իրեն պաշտպանով ապահովելու միջնորդություն չի հարուցել: **Փաստաբան Գ. Բաբայանը սույն գործով վարույթին մասնակցել է որպես ամբաստանյալ Զ. Բադիրյանի շահերի պաշտպան՝ առանց վերջինիս հստակ ու կամավոր ցանկության: Գործում բացակայում է փաստաբան Գ. Բաբայանի՝ սույն գործով վարույթին մասնակցելու օրինական հիմքերը, մասնավորապես՝ ամբաստանյալի և նրա ազգականների խնդրանքը կամ համաձայնությունը, վերջինիս մասնակցությունը հաստատված չէ նաև այլ անձանց հրավերով:**
6. Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատական նիստերի ձայնագրառման սկավառակով, որի ուսումնասիրությունից երևում է, որ նոր դատաքննության ժամանակ որպես վկա հարցաքննված քննիչ Ն.Խաչատրայանը մի քանի անգամ ի պատասխան պաշտպան Ռ.Բեջանյանի հարցերին պատասխանում է, որ իր նախաձեռնությամբ է հրավիրվել փաստաբան Գ. Բաբայանը:

6 <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

1. ՀՀ Փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի Գ.Գևորգյանը 30.04.2015թ-ին տրամադրել է տեղեկանք, որի համաձայն ԼՂՀ փաստաբան Գարեգին Բաբայանի նկատմամբ 07.12.2012թ. և 2012թ-2015թ.թ. ընկած ժամանակահատվածում վերինիս նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել:

2. Տեղեկանք առ այն, որ Գարեգին Աշոտի Բաբայանը ՀՀ սահմանների պաշտպանության ժամանակ 02.09.1993թ-ին ստացել է կոնտուզիա և 2-րդ խմբի հաշմանդամ է:
3. ՀՀ ԵԿՄ Գորիսի տարածքային բաժանմունքի կողմից տրամադրված <<Մարտական ուղի>>, որի համաձայն Գ.Բաբայանը 1989թ-ից անդամագրվել է Գորիսի կամավորական ջոկատին և մասնակցել է ՀՀ սահմանների պաշտպանությանը: 2006թ-ին պարգևատրվել է <<Մարտական ծառայության >> մեդալով, 2007թ-ին՝ Երկրապահի հուշամեդալով:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Գնահատելով գործում առկա ապացույցները, լսելով Պատասխանողի բացատրությունը, հետազոտելով կարգապահական գործում առկա փաստաթղթերը և մյուս ապացույցներ, Պալատի խորհուրդը գտնում է, որ Պատասխանող Գարեգին Բաբայանը ենթակա է կարգապահական պատասխանատվության Կանոնագրիքի 3.1.9 ենթակետի պահանջների խախտման համար:

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար: Կանոնագրքի 3.1.9 կետի համաձայն. *¦Փաստաբանը չի կարող ընդունել նախաքննության և դատաքննության փուլերում տվյալ գործով վարույթ իրականացնող պաշտոնատար անձի կողմից իրեն ուղղված՝ տվյալ վարույթին առնչվող անձի գործի վարման հետ կապված իրավական օգնություն ցույց տալու հանձնարարություն:*

Եթե փաստաբանը չկարողանա ապացուցել, որ քրեական գործով պաշտպանության համար իրեն է դիմել վստահորդը կամ նրա հանձնարարությամբ այլ մասնավոր անձ, ապա Պալատի խորհուրդը կարող է հաստատված համարել այն փաստը, որ փաստաբանը քրեական գործով վարույթում է հայտնվել նախաքննության մարմնի պատվերով:

Պալատի խորհուրդը կարող է հաշվի առնել նաև փաստաբանի կողմից իրականացրած գործողությունների բնույթը՝ վստահորդի շահերը պատշաճ կարգով ներկայացված լինելու տեսանկյունից: Փաստաբանի կողմից նախաքննության մարմնի պաշտոնատար անձի հանձնարարությամբ (առաջարկությամբ) գործին ներգրավված լինելու և վստահորդին բավարար իրավական օգնություն ցույց տված չլինելու արարքների համակցությունը հանդիսանում է ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում§:

Վկայակոչված դրույթի ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում է համարվում փաստաբանի կողմից միաժամանակ երկու վարքագծի դրսևորումը՝

ա. *Փաստաբանի կողմից գործին ներգրավվելը նախաքննության մարմնի պաշտոնատար անձի հանձնարարությամբ (առաջարկությամբ).*

բ. վստահորդին բավարար իրավական օգնություն ցույց չտալը:

Հետևաբար անհրաժեշտ է պարզել արդյոք Գարեգին Բաբայանի կողմից կատարվել է վերոնշյալ գործողությունները:

Տվյալ դեպքում Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Գարեգին Բաբայանը

երկու գործողություններն էլ կատարել է:

Այսպես՝ Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Գարեգին Բաբայանն ընդունել է Զավեն Բադիրյանի վերաբերյալ քրեական գործով վարույթ իրականացնող պաշտոնատար անձի՝ քննիչ Ն.Խաչատրյանի կողմից իրեն ուղղված՝ Զավեն Բադիրյանի որպես կասկածյալ և որպես մեղադրյալ՝ պաշտպանության իրավունքը բացատրելու արձանագրութունը կազմելուն, ըստ որի Զ.Բադիրյանը հրաժարվել է պաշտպան ունենալու իրավունքից:

Սույն գործի փաստական հանգամանքները վկայում են այն մասին, որ փաստաբան Գարեգին Բաբայանն առանց որևէ իրավական հիմքերի, առանց Զավեն Բադիրյանի համաձայնության, քննիչի կանչով ներկայացել է քննչական բաժին, ներկա գտնվել կասկածյալ և մեղադրյալ Զ.Բադիրյանի պաշտպան ունենալու իրավունքը բացատրելու արձանագրության կազմմանը և ստորագրել այն: Նշված փաստը հիմնավորվում ՝ ՀՀ ՊՆ ՔԾ կայազորային քննչական բաժնի քննիչ Ն.Խաչատրյանի կողմից 02.07.2014թ. դատական նիստի ժամանակ հայտնած տվյալների համաձայն ինքն է հրավիրել փաստաբան Գ.Բաբայանին՝ Զավեն Բադիրյանի և Գ.Գյագունցի , որպես կասկածյալ և որպես մեղադրյալ եղած կարգավիճակում պաշտպան ունենալու իրավունքը բացատրելու համար, ովքեր հրաժարվել են պաշտպան ունենալու իրավունքից:

Գ.Բաբայանը չի ներկայացրել ապացույց, *որ քրեական գործով պաշտպանության համար իրեն է դիմել Զավեն Բադիրյանը կամ նրա հանձնարարությամբ այլ մասնավոր անձ:*

Հատկանշական է, որ վկայակոչված 4 արձանագրությունները կազմվել են տարբեր օրերի և անտրամաբանական կլիներ, որ փաստաբանը համաձայնվեր ամեն անգամ մեղադրյալների խնդրանքով այցելեր քննչական բաժին, որպեսզի իրենից հրաժարվեն:

Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Գարեգին Բաբայանը Սյունքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում ինչպես դատաքննությունից առաջ, այնպես էլ դատաքննության ընթացքում, օրենքով սահմանված կարգով, այն է՝ Դատարանի որոշմամբ չի ներգրավվել որպես ամբաստանյալ Զ. Բադիրյանի շահերի պաշտպան և օժտված չլինելով այդպիսի իրավասությամբ, ներկայացրել է վերջինիս շահերը, որի արդյունքում խախտվել է ամբաստանյալի պաշտպանության իրավունքը:

Խորհուրդը գտնում է, որ մեղադրյալ Զ. Բադիրյանը Դատարանում իրեն պաշտպանով ապահովելու միջնորդություն չի հարուցել: **Փաստաբան Գ. Բաբայանը սույն գործով վարույթին մասնակցել է որպես ամբաստանյալ Զ. Բադիրյանի շահերի պաշտպան՝ առանց վերջինիս հստակ ու կամավոր ցանկության:**

Փաստաբան Գ. Բաբայանը՝ սույն գործով վարույթի ընթացք ում չի ներկայացրել որևէ ապացույց առ այն, որ ամբաստանյալը կամ նրա համար այլ անձինք իրեն դիմել են ամբաստանյալ Զ.Բադիրյանի պաշտպանությունը իրականացնելու համար:

Օրինական ուժ ստացած ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշման պատճառաբանական մասում նշված է.

<< Ամբաստանյալ Զ. Բադիրյանը՝ իրեն պաշտպանով ապահովելու միջնորդություն չի հարուցել: **Փաստաբան Գ. Բաբայանը սույն գործով վարույթին մասնակցել է որպես ամբաստանյալ Զ. Բադիրյանի շահերի պաշտպան՝ առանց վերջինիս հստակ ու կամավոր ցանկության: Գործում բացակայում է փաստաբան Գ. Բաբայանի՝ սույն գործով վարույթին մասնակցելու օրինական հիմքերը, մասնավորապես՝ ամբաստանյալի և նրա ազգականների խնդրանքը կամ համաձայնությունը, վերջինիս մասնակցությունը հաստատված չէ նաև այլ անձանց հրավերով>>:**

Կանոնագրքի 3.1.9 կետի համաձայն փաստաբանն է պարտավոր ապացուցել, որ գործին չի ներգրավվել նախաքննության մարմնի պաշտոնատար անձի հանձնարարությամբ կամ առաջարկությամբ:

Խարհրդի նիստի ժամանակ Պատասխանողը ընդունել է իր կողմից թույլ տված կարգապահական խախտումը և խնդրել է իր նկատմամբ մեղմ վարվել:

2. Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Գ.Բաբայանը նաև բավարար իրավական օգնություն ցույց չի տվել ***Զ.Բադիրյանին՝ այն է***

Դատարանում /առանց ամբաստանյալի հրավերի առկայության և հստակ համաձայնությամբ/ ներգրավվելով Զ.Բադիրյանի պաշտպան, չի ծանոթացել քրեական գործի նյութերին, չի խորհդակցել նրա հետ , ամբաստանյալին չի բացատրել դատական քննության արագացված կարգ կիրառելու բնույթն ու հետևանքները, դատարան է ներկայացրել իր կողմից նախապես տպագիր կազմված միջնորդության տիպային ձևը:

Պալատի խորհուրդը, դիտարկելով փաստաբան Գարեգին Բաբայանի գործողությունները, փաստում է, որ նման արարքները ծայրահեղ բացասական են ազդում փաստաբանության հեղինակության վրա և անվստահություն են առաջացնում ոչ միայն տվյալ փաստաբանի, այլ՝ ողջ փաստաբանության նկատմամբ:

Նկատի ունենալով վերոգրյալը Պալատի Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Գարեգին Բաբայանը թույլ է տվել Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.1.9 կետի խախտում, որի համար ենթակա է կարգապահական պատասխանատվության:

Պալատի խորհուրդը հատուկ մատնանշում է, որ տվյալ դեպքում ԼՂՀ փաստաբան Գարեգին Բաբայանի նկատմամբ որպես տույժ չի կիրառվում հավատարմագրի գործողության դադարեցում՝ բացառապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պատասխանողն ընդունել է, որ թույլ է տվել կարգապահական խախտում և զղջում է կատարածի համար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 17.1-րդ հոդվածի, 39-րդ հոդվածի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ կետերի և 3-րդ մասի, ՀՀ «Փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի

ՈՐՈՇԵՑ՝

1. *ԼՂՀ փաստաբան Գարեգին Բաբայանին (ԼՂՀ փաստաբանական գործունեության թիվ 27 արտոնագիր, ՀՀ տարածքում փաստաբանի գործունեության թիվ 26 հավատարմագիր) մեղավոր ճանաչել «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 3.1.9 կետի պահանջների խախտման համար.*
2. *Փաստաբան Գարեգին Բաբայանի նկատմամբ նշանակել՝ կարգապահական տույժ՝ տուգանք 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, և լրացուցիչ տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն՝ «Դենթոլոգիա» թեմայով, 8 (ութ) ակադեմիական ժամ ժամաքանակով:Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Պատասխանող՝ ԼՂՀ փաստաբան Գարեգին Բաբայանին և Դիմող՝ Ռոբերտ Բեջանյանին, ինչպես նաև ԼՂՀ փաստաբանների պալատին:*

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

Նիստը նախագահող՝ Լիպարիտ Սիմոնյան